

«Աշխարհական շարերով հոգևորականն ներկայութիւնը հասարակութեան մէջ կընդունուէր առանց որևէ անտեղի դարմանքի և բացականչութիւնների, ինչպէս այդ յաճախ տեղի ունի այժմս... Արդեօք այդ չէ՞ պատճառը, որ հոգևորականութիւնը ժողովրդի հետ ամենօրեայ յարաբերութեան մէջ լինելուց այժմս այդչափ խուսափում է»:

### ԿԼԹՈՒԽԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիայում սկսուեց մի նոր անդամահատութիւն՝ կաթոլիկ եկեղեցու պետութիւնից բաժանուելը: Այդ անդամահատութիւնը սկսուեց մի մասի ուրախական ազազակներով, մինչդեռ միւս մասը զայրագին բողոքում և յարձակում էր:

Բայց հասկանալու համար, թէ որ աստիճանի խորն է շօշափում այդ հարցը հասարակութեան բոլոր խաւերը ու ստեղծում երկու անհաշտ բանակներ, պէտք է ինկատի առնել դպրոցի, պատանեկութեան և կեանքի կազմակերպութեան վրայ ունեցած այն ահագին ազդեցութիւնը, որը ձեռք էր բերել կաթոլիկ հոգևորականութիւնը Ֆրանսիայի՝ «կաթոլիկ եկեղեցու այդ անդրանիկ դասեր վերայ»:

1902 թուին երբ իշխանութիւնն անցաւ ներկայ՝ պ. Կոմբէ նախարարութեան ձեռքը, Ֆրանսիայում գոյութիւն ունէին 914 թոյլատրուած հոգևոր միաբանութիւններ, որոնցից 5-ն արական, իսկ 909 իգական, 457 միաբանութիւններ, որոնց հաստատման մատին արդէն բանակցութիւններ էին վարում՝— վերջիններիցս 61-ն—արական, 366-ն—իգական: Ընդ ամենը 1371 միաբանութիւն:

Հոգևոր միաբանութիւններին պատկանող զանազան հիմնարկութիւնները թիւն հասնում էր 20,823:

Այդ հիմնարկութիւնները մեծադոյն մասը՝—16,904 ծառայում էին կրթական—դաստիարակչական նպատակներին, իսկ 319 հիմնարկութիւնները հիւանդանոց, ասպատանարան կամ զուտ կրօնական նպատակներին ծառայող հիմնարկութիւններ էին:

Առհասարակ բոլոր երկիրներում մեծ խնդիր է եղել, թէ ի՞նչ տեսակի դպրոցներն են աւելի նպատակայարմար.—ժողովրդական, թէ եկեղեցական—ծխական և որքան ազատ հայեայցք է մտել մի երկրի մէջ, որքան աւելի և—աւելի է մուտք գործել կրօնական ազատութիւնը, այնքան աշխարհական դպրոցները

յաղթանակն ապահովուել է մեծ չափով: Իսկ ազատ Ծրանսիա-  
յում, ուր գոյութիւն ունի առաւել ռամիաւարական վարչու-  
թիւն և լայն կրօնական ազատութիւն, ընական է, որ այդ  
մրցումն աշխարհիկ և կրօնական դպրոցներում պէտք է առա-  
ւել ուժեղ լինէր:

Բայց պարզ է, որ միանգամ ձեռք բերած դիրքը հեշտու-  
թեամբ և առանց կռուի չեն զիջանում և եթէ մի կողմից հա-  
տարակապետական կառավարութիւնը ջանք է գործ դնում  
դպրոցին վերադարձնելու իւր ազատութիւնը, թողնելով հո-  
գևորականութեան միմիայն հաւատոյ շրջանակը և բարոյական  
խրատներն առարկէզը, միւս կողմից կղերական կուսակցու-  
թիւնը չի ուզում զիջանել իւր ձեռք բերած դիրքն ու ազդե-  
ցութիւնը:

Պատերազմը յայտարարուած է և թէ ինչով կը վերջանայ,  
առ այժմս դժուար է ասել: Ամեն ինչ կախուած է Կոմբի նա-  
խարարութեան յարատեւութիւնից: քանի որ իրաւունքը Կոմբի  
ձեռին է, պէտք է կարծել, որ նա դործը կը տանի առկունսու-  
թեամբ, և այդ երևում է Սկոթերում արտասանած չնրա ձառից:  
Այդ ձառը ներկայ ըսպէյում մեծ նշանակութիւն է ստանում  
շնորհիւ Վատիկանի և Ֆրանսիական կառավարութեան սուր  
յարաբերութիւնների և ներկայացնում է Կոմբի կուսակցու-  
թեան քաղաքական ծրագիրը: Ծրանսիայի ներքին կեանքին վե-  
րաբերեալ մի քանի խնդիրներ քննելուց յետոյ, Կոմբն անցաւ  
եկեղեցին պետութիւնից բաժանելու սուր խնդրին:

Նա ցոյց տուաւ թէ ինչ ազդեցութիւն էր ձեռք բերել  
հոգևորականութիւնը Ֆրանսիական պետական կեանքի բոլոր  
կողմերի վրայ և աւելցոյրեց, որ ներկայ նախարարութեան օրօք  
յաջողուեց հեռացնել Ֆրանսիայից հոգևոր միաբանութիւններ,  
որոնք աշխատում էին ստրկացնել նրան. այժմս հարկաւոր է  
ազատել Ֆրանսիան նրա—(հոգևորականութեան) պապական  
ազդեցութիւնը զօրացնելու ձգտումներից:

«Առաջին կայսրութեան ժամանակ հոգևորականութեան էր  
թողնուած ոտտիկանների վանիչ դերը. իսկ հետեւեալ աւելի  
թոյլ իշխանութեանց ժամանակ նա կարողացաւ ձեռք բերել  
իւր դրութիւնն ապահովող դաշնագիրը պետութեան հետ  
(կօնկորդատ): Երեսուն տարի է, որ հատարակապետութիւնը  
մաքաւում է անասելի դժուարութեանց դէմ, որ հէնց կօն-  
կորդատի հիման վրայ յարաբերութիւն սահմանի հոգևոր  
և աշխարհիկ իշխանութիւնների մէջ, սակայն պապական իշ-  
խանութեան և եպիսկոպոսների կողմից այդ դաշնագրի յաճա-

խանի կատարած խախտումները, ինչպէս օրինակ պապի Ֆրանսիսկան Եպիսկոպոսներին հետ անմիջական յարաբերութեանց մէջ մտնելը, կառավարութեան կողմից առաջարկուած թեկնածուներին Եպիսկոպոս չը հաստատելը, մեր ներքին գործերին խառնուելը և այլն՝ հարկադրում են զիմել այն միջոցի, որին զիմում են անհամաձայն ամուսինները՝ ամուսնալուծութեան, և եթէ հնար է՝ փոխադարձ համաձայնութեամբ»:

Պ. Կօմբը յոյս է տածում, որ այդ քայլը հասարակապետական կուսակցութեան կողմից կընդունուի «ոչ թէ քրիստոնէութեան դէմ որևէ թշնամական նպատակներով, այլ սօցիալական խաղաղութեան և կրօնական ազատութեան շահերի տեսակէտից»: Կօմբը մատնանիշ արաւ, որ հէնց այդ ուղղութեամբ է գործում պալատի կողմից ընտրուած մասնաժողովը և յոյս ունի, որ պալատն էլ այդ ուղղութեամբ կարծիք կը տայ:

Կօմբը կարծում է, որ եկեղեցին պետութիւնից բաժանելով առաջ կը գայ հասարակական խաղաղութեան նոր և երկարատև մի շրջան, որով միայն կապահովուի բոլոր դաւանութեանց կատարեալ ազատութիւնը պետութեան անվիճելի իրաւատութեան ներքոյ»:

Այս ճառից պարզ երևում է, որ Ֆրանսիայի նախարարը հաստատուն կերպով մշակել է իւր ծրագիրը և մտադիր է տուկունութեամբ իրագործել այն:

Նա համոզուած է, որ շատ լուրջ խնդրին է ձեռք դարկել: «Նա կարծում էի, որ եկեղեցական իշխանութիւնները չեն կարող բացի իրենց պաշտամունքի կատարեալ ազատութիւնից՝ ուրիշ որևէ բան ցանկալ, բայց սխալուեցայ, որովհետև ինձ նախադուշացրին և յայանեցին, որ կաթոլիկական սկզբունքը միանգամայն դէմ է պետութեան և եկեղեցու փոխադարձ ազատութեան և իբրև այդ բանի ապացոյց մատնանիշ եղաւ Պիոս IX պապի Syllabus հովուական շրջաբերականի վրայ»:

«Ֆարեբախտաբար մենք այլ ևս այն շրջանում չենք սպրում, երբ այն կատարելագործուած անաթեմաները, (բանադրանքները) սրօնցով ուղանում է Syllabusը տարուալի ազդէին ու վախեցնէին մարդուն. և մենք չենք վերաւորիլ ամենաերկջոտ հասարակուպետականին անգամ, ենթադրելով, որ նրա համոզմունքն այդպիսի հասարակ պատճառներով կարող է խախտուել ու փոխուել»:

Կօմբը չի վախենում այն բանից, որ պապը կը զրկի Ֆրանսիան Արևելքում կաթոլիկներին հովանաւորի դերից: «Պապա-

կանութիւնը զուր է ձգտում վախճանել մեզ այդպիսի բաներով: Ֆրանսիան միշտ ամենայն աղնուութեամբ է կատարել կաթոլիկների պաշտպանի դերն Արևելքում:

«Ներկայ Ֆրանսիան նշանակութիւն չի տալիս և ցանկութիւն չունի եկեղեցու անդրանիկ դուստր կոչուելու, որով նախկին Ֆրանսիան պարծենում էր»:

Վերջում Կոմբը յոյս է յայանել, որ անշուշտ կը յաջողուի եկեղեցին աէրութիւնից բաժանելու իւր ծրագիրը:

Թէ ս՛րքան ուղիղ է Կոմբի կարծիքը՝ դժուար է ասել:

Պէտք է յիշենք կաթոլիկ Ֆրանսիայում դարերի ընթացքում արմատացած սովորութիւններն ու համոզմունքները, որպէս զի հասկանալ կարողանանք, թէ ներքին ինչ դժուարին կուի է առաջ գալու. մարդիկ աւելի զգացմունքներով և սովորութիւններով են ապրում, քան դատողութիւններով և բանականութեամբ: Եւսկ հին սովորութիւններն ու հաւատալիքները Ֆրանսիայում դեռ շատ և շատ ուժեղ են:

Չայնքը բաժանուած են. այդ խնդրով է ղըադուած մամուլն ու հասարակութիւնը. հոգևորականութիւնը կատաղի կուի է մղում և Ֆրանսիան անց է կացնում պատմական ամենանշանաւոր մօմէնտներից մինը: Տեսնենք թէ ինչով կվերջանայ այդ բոլորը:

Ֆրանսիայի և Վատիկանի յարաբերութեանց խզումը, որը տեղի ունեցաւ Պիոս X պապի ընտրութեան տարեդարձին, առիթ դարձաւ համակրական բազմաթիւ սուղերձների և հանրագիրքների թէ անհատների և թէ դանադան ընկերութիւններէ կողմից: Եպիսկոպոսներն իրար ետեկց հանդիսաւոր յայտարարում էին իրենց օրգաններում հռովմէական քահանայապետին իրանց կատարեալ անձնուիրութիւնն ու հնազանդութիւնը:

Կաթոլիկական թերթերում հրատարակուած են պապին ուղղուած մի քանի ուղերձներ և հանրագրեր, որոնք ստորագրուած են ժողովրդի կողմից:

Перк, Вѣст. հաղորդում է, որ «L'Univers» թերթում տպուած ուղերձում ֆրանսիական կաթոլիկները ցաւակցութիւն յայանելուց յետոյ, իրենց որդիական անձնուիրութիւն և հաւատարմութիւն են արտայայտում դէպի Պապը և նրա բոլոր հրամանները, ցանկութիւններն ու խրատները: Հոգևորականութեան և կաթոլիկ ժողովրդի այսպիսի համակիր արամադրութեան միջոցին դէպի Վատիկանը, իրենց կամակորութեամբ վե-

բոյի շեալ միջնադէպի առիթ տուող երկու եպիսկոպոսները առաւել բարւոք համարեցին հպատակուել Պապին և Հռովմ գնացին:

Միւս կողմից էլ հասարակապետականներն են համակրական ցոյցեր անում Կամբլինախարարութեան և «Petite Republique» թերթում տպուած են կառավարութեան ուղղութեան համակրողների ուղերձներ: Մօտենում են երկու կուսակցութեան բուռն դործունէութեան մոմէնտներ և մենք մօտ ապագայում հանդիսատես կլինինք բաւականին խոշոր դէպքերի:

Յուլիսի 31 ին Պրագա քաղաքում տեղի ունեցաւ տեղական հոգևորականութեան կողմից հրաւիրուած քահանայից համաժողովը, որին ներկայ էին 2000 ից աւելի քահանաներ և նրանց տեղապահներ: Չորս թեմերից հաւաքուած քահանաները ժողովում շօշափեցին գործնական բաղմաթիւ այնպիսի խնդիրներ, որոնց մասին գրւում էր ցայսօր միմիայն բարեփոխութեանց կողմնակից թերթերում և վճռականապէս պահանջեցին այդ խնդիրների իրագործումը:

Ամենից առաջ նրանք շօշափեցին եպիսկոպոսներին նշանակելու խնդիրը:


«Ի նկատի ունենալով եպիսկոպոսներին պաշտօնի նշանակելու դործի լրջութիւնը՝ մանաւանդ մեր այս խառը ժամանակում, մենք պահանջում ենք, որ այդ տեղերը տրուին միմիայն արժանաւորներին՝ հովուական պաշտօնավարութեան մէջ փորձուած հովիւներին, և խստիւ բողոքում ենք այն մտքի դէմ, որ այդ տեղերը ձեռք բերելու իրաւունք է տալիս ծագումը կամ աստուածաբանութեան դօքտորի կոչումը, առանց ի նկատի ունենալու միւս յատկութիւնները»:

Այնուհետև պահանջ յայանեցին, որ թեմական խորհրդարաններում, որոնք գոյութիւն ունին եպիսկոպոսների մօտ և որոնց պաշտօնն է դեկավար հանդիսանալ հովուական գործունէութեան մէջ, գոնէ առնուազն տեղերի կէսը յատկացուի ծխական հոգևորականներից ամենափորձուած և հեղինակաւոր քահանաներին. որ թեմական սեմինարիաներին տեսուչ նշանակուին հովուական բաւականաչափ փորձառութիւն ունեցող անձինք, որ գործնական աստուածաբանական ամբիօնները տրուին այն քահանաներին, որոնք առնուազն տասը տարի պաշտօնավարել են հովուական ասպարիզում. որ աւելի արգարութիւն պահպանուի տեղեր յատկացնելիս, պաշ-

տօնի նշանակելիս, անշարժ կայք, պարզենք ըստանելիս և ըն:

Համաժողովը իւր ընտրած մասնախմբի վրայ պարտք դրաւ՝ ամեն օրինական միջոցներով աշխատել, որ հոգևորականութեան վերոյիշեալ «սուրբ և արդարացի» պահանջներն անպատճառ իրագործուին: Քահանաների այս անտուօր ոճը՝ իրենց բարձր իշխանութեան մասին, իւր վրայ դարձրեց եպիսկոպոսների և մամուլի ուշադրութիւնը:

Եպիսկոպոսները մատնանիշ արին, որ քահանայք իրենց կարգապահութեամբ և դէպի իշխանութիւն տածած յարգանքով պէտք է ուրիշներին օրինակ լինին և չը պէտքէ լսառնուին և հրահանգներ տան իրենց իշխանութեան:



## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

**ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ**

(Շարունակութիւն).

### II

**ԿԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Բերգեմանի կարծիքով դաստիարակի ամենագլխաւոր նպատակը պիտի լինի պատրաստել և դաստիարակել կուլտուրայի յառաջադիմութեան գործի համար կարող և ուժեղ աշխատաւորներ: Բայց նախքան դաստիարակութեան մասին իւր հայեցակէտը պարզելը՝ նաև հարցնում է թէ իրագործելի է արդեօք այդ նպատակը. այս մի շատ լուրջ հարց է այն տեսակէտից, որ մարդկութեան կուլտուրական աշխատանքին մասնակցելը պահանջում է իւրաքանչիւր՝ մինչև իսկ աննշան աշխատաւորից մեծ և ծանր զոհեր՝ գործին կատարելապէս նուիրուել: Պատահում է, որ այս դժուարին ասպարիզի մէջ շատ անգամ